ՀՏԴ : 929:329.14 Մեհրաբյան + 947.925

Doi:10.54503/0135-0536-2022.3-3

ՍԱՐԳԻՍ ՄԵՀՐԱԲՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 155-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՍԱՐԳԻՍ ՄԵՀՐԱԲՅԱՆ (ԽԱՆԱՍՈՐԻ ՎԱՐԴԱՆ)*

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Բանալի բառեր՝ Ս. Մեհրաբյան, Շուշի, Վան, Սևքարեցի Սաքո, Խանասոր, Ս. Զավարյան, Կիլիկիա, Ռոստոմ, հայ-թաթարական բախումներ, Առաջին համաշխարհային պատերազմ, կամավորական շարժում, ցեղասպանություն, Ա. Մանուկյան, Երևան, Բաքու:

Նախաբան

Հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներից էր Սարգիս (Սերգեյ) Մեհրաբյանը: Հասարակությանը նա հայտնի է Խանասորի Վարդան, Վարդան, Վահե Սյունի, իսկ երգերում՝ Շատախի առյուծ[1] անուններով:

Ս. Մեհրաբյանը ծնվել է 1867 թ. օգոստոսի 10-ին Շուշիում[2]: Սովորել է տեղի թեմական դպրոցում[3]: Ուսանելու տարիներին ընթերցել է ընդհատակում հրատարակվող խմորատիպ թերթեր՝ «Նժդեհ», «Մունետիկ»[4], «Նոր-Սերունդ» և Մկրտիչ Փորթուգալյանի տպագիր «Արմենիա» պարբերականը, նաև՝ հայ գրողների, հատկապես՝ Րաֆֆու հայրենասիրական վեպերը, որոնք աստիճանաբար ձևավորել են նրա աշխարհայացքը:

1885 թ.՝ դպրոցն ավարտելուց հետո, Ս. Մեհրաբյանը մեկնում է Բաքու, որտեղ աշխատում է Ռոտշիլդ եղբայրներին պատկանող նավթավերամշակման ձեռնարկությունում: 1888 թ. զորակոչվում է ռուսական բանակ, ծառայում է Գորիում, Ալեքսանդրապոլում և, որպես թեմական դպրոցի շրջանավարտ, ծառայելու էր ոչ թե 4, այլ՝ 3 տարի[5]: Զինծառայող հայ ընկերների հետ այցելում են Անիի ավերակները, ուսումնասիրում պատմական հուշար-

---

** Ներկայացվել է 14. VII. 2022 թ., գրախոսվել է 18. X. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

[1] *Խանասորա Վարդանի Հիշատակարանը. 1992, 3:*

[2] *Թոռնուհու՝ Իրինա Պոստինայի վկայությամբ՝ Ս. Մեհրաբյանը ծնվել է Արցախի Ասկերանի շրջանի Ղշլաղ (Ծաղկաշատ) գյուղում [«Ալիք» (Թեհրան), 05. X. 2017]:*

[3] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 80 շրջ.:*

[4] *«Մունետիկ»–խմորատիպ թերթ, հրատարակվել է Թիֆլիսում (1885):*

[5] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 80 շրջ.:*

ձաններն ու լուսանկարվում[6]: Իշխանությունները, տեղեկանալով հայ զինվորների անսպասելի «հետաքրքրության» մասին, հետաքննություն են կատարում, սակայն որևէ հանցանք չեն գտնում: 1890 թ. Ս. Մեհրաբյանն իր չորս ընկերների հետ դասալքում են, և նա սեպտեմբերի 23-ին մասնակցում է Սարգիս Կուկունյանի արշավանքին: Դրա ձախողումից հետո գալիս է Երևան, տեղի ՀՅԴ ներկայացուցիչ Գեղեոն Ահարոնյանի օգնությամբ ստանում պարսկական անձնագիր, ապա հաստատվում է Սալմաստի Ղալասար գյուղում[7]: Հավանաբար, 1890 թ. անդամագրվում է ՀՅԴ-ին և ստանում Վարդան կուսակցական ծածկանունը[8]:

Ազատագրական գործունեության սկիզբը

Ատրպատականում Ս. Մեհրաբյանը, որտեղ, հավանաբար, ստանում է Վարդան ծածկանունը, ազատագրական գործունեությունը քողարկում է իբրև կրթական տեսուչ Երվանդ Թաղիանոսյանի[9] ծառա, Դերիկի վանահոր օգնական, հեծյալ պահակ, վանական կալվածքների կառավարչի օգնական[10], որոնք հնարավորություն են տալիս նրան առանց որևէ կասկածի շրջել հայկական գյուղերը և կատարել կուսակցության հանձնարարությունները:

1894 թ. սեպտեմբերին Վարդանը զինատար խմբի հետ անցնում է Երկիր՝ Վան, ապա վերադառնում է Պարսկաստան: 1895 թ. մայիսի 22-ին հայդուկներով Վարդանը Սալմաստից անցնում է Վան: Այդ ժամանակ Վասպուրականում սկսվել էին թուրք-քրդական հարձակումները հայերի վրա, ուստի կուսակցությունը հրահանգում է Վարդանին կազմակերպել հայ բնակչության ինքնապաշտպանությունը[11]: Հայդուկները բնակավայրերում կոչ են անում գյուղացիներին զենք գնել, կազմակերպվել, հակահարված տալ իրենց կողոպտող քրդերին, նախապատրաստվել համընդհանուր ապստամբության[12]:

Վանի հայ բնակչությանը չվտանգելու համար խումբը որոշում է թողնել քաղաքը: Վասպուրականում գործող խմբերին հայտնում են, որ տեղակայվեն Հայոց ձորում: Հասնելով Վարագա լեռ՝ հանդիպում են հայ ազատագրական շարժման գործիչ, հայդուկ, վիրավոր Վազգենին (Տիգրան Տերոյան)[13], որին տեղափոխում են Շուշանց գյուղ[14]:

---

[6] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 81:*

[7] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 81:*

[8] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 3:*

[9] *Թաղիանոսյան Երվանդ (1864–1948) – մանկավարժ, հասարակական գործիչ, խմբագիր, թարգմանիչ:*

[10] *Խանասորա Վարդանի Հիշատակարանը. 1992, 3, Նիկոլ Դուման. 2021, 14:*

[11] *Սալմաստում հայդուկների ներկայությունը որոշ չափով զսպում էր քրդերին հայկական բնակավայրերի վրա հարձակումից (տե՛ս Ֆրանգեան. 1904, 77):*

[12] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 50:*

[13] *Պետոյի (Ալեքսանդր Պետրոսյան) մահից հետո Վազգենը գլխավորել է Վասպուրականի ազատագրական պայքարը: Ավելի մանրամասն տե՛ս Սահակեան. 1998, 22–27:*

[14] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 6:*

1896 թ. մայիսի 14–15-ը հայ ազատագրական շարժման գործիչ, հայդուկ, ՀՅԴ անդամ Նիկոլ Դումանի (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան) հետ Վարդանը մասնակցում է Դերիկի վանքի կռվին[15]*: Օգոստոսին 8 հայդուկների հետ գալիս է Վան*[16]*, ղեկավարում է Շատախի ինքնապաշտպանությունը, իսկ սեպտեմբերին մասնակցում է Վանի մարտերին, այնուհետև՝ վերադառնում Ատրպատական: Սեպտեմբերի 30-ին Ատրպատականի ՀՅԴ Կենտրոնական կոմիտեին ուղղված նամակում Ն. Դումանը տեղեկացնում է, որ Վարդանը հիվանդ է և գտնվում է Խոյում*[17]*:*

Ապաքինվելուց հետո Վարդանը հաստատվում է Թավրիզում, որտեղ ոչ միայն մանկավարժական, այլև մշակութային բուռն գործունեություն էին ծավալել հայ ուսուցիչները: Վարդանը հուշերում բարձր է գնահատում նրանց, հատկապես՝ երկու ուսուցչուհիների՝ հայ ազատագրական շարժման առաջին կին գործիչներից Սաթենիկ Օհանջանյանի[18] *և ՀՅԴ անդամ Մարիամ Մակարյանի*[19] *լուսավորչական աշխատանքները: Նա գրում է. «Նոքա (ուսուցիչները – Ռ. Ս.) սերտ կապ էին պահում ժողովրդի հետ, ներկայացումներ էին կազմակերպում, ժողովներ, երեկույթներ, ... Թավրիզեցի կանանց և օրիորդներին հրապարակ էին քաշում, ներկայացումներին մասնակցել տալիս: ... Այս ուսուցիչները Թողած Կովկասի բարձր աշխատավարձը, այդտեղ ստանում էին բավականին համեստ աշխատավարձ»*[20]*:*

Վերլուծելով 1890-ական թվականների մղված մարտերը՝ Վարդանն ու իր զինակիցները համոզված էին, որ արևմտահայությունը կկարողանա ազատագրվել օսմանյան լծից և Բուլղարիայի օրինակով հնարավորություն կունենա ազատություն ստանալ. «Մենք ... մեր կյանքը ի սպաս դրինք հայ ժողովրդին, ամենամաքուր, անձնուրաց, կրթված, զոհաբերության ընդունակ լավագույն ընկերները, հայ ժողովրդի սերուցքը զոհաբերեցինք, զոհերի ահագին շարաններ երկրի զանազան մասերում»[21]*:*

Վան-Վասպուրականից վերադառնալով՝ Պարսկաստան, ապա հաստատվում է Բաքվում, աշխատանքի է անցնում «Կասպիական ընկերության»[22]

---

[15] *Ավելի մանրամասն տե՛ս* Նիկոլ Դուման. *2021, 62–69:*

[16] Նիկոլ Դուման. *2021, 69: Վանում դիմադրական կռիվների ավարտից հետո Վարդանը ձեռնամուխ է լինում զինվորական պատրաստականություն ուսուցանել գավառներից եկած մոտ 50 հոգու (տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 4):*

[17] Նիկոլ Դուման. *2021, 71:*

[18] *Հովհ. Թումանյանի խոսքերով՝ «Նա (Սաթենիկ Օհանջանյանը – Ռ. Ս.) թանգ էր, որովհետև էն հազագիտ անձնաւորութիւններից մէկն էր, որոնք աւելի շատ ուրիշների համար են ապրում» [«Հորիզոն» (Թիֆլիս), 04. X. 1915]:*

[19] *Օրիորդի մասին Վարդանը հետևյալ վկայությունն է թողել. «Մարոն ցածրահասակ, սիրունատես, թուխ դեմքով, քնքույշ կազմվածքով ... քաղցրիկ, դուրեկան ձայնով, որի երգը հաճույքով էինք լսում» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 7, թ. 7 շրջ.):*

[20] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 82:*

[21] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 75:*

[22] *«Կասպիական ընկերությունը»* («Каспийское товарищество») *հիմնվել է 1886 թ. Պողոս, Հակոբ, Արշակ և Աբրահամ Ղուկասյանների կողմից: Գործել է մինչև 1917 թ.:*

նավթահանքում, որի կառավարիչն էր իր ընկեր Մաթեոսը: Բնակվում էր եղբոր մոտ, որը հանքային ջրերի գործարան ուներ[23]*:*

1898 թ. ապրիլ–հունիս ամիսներին, որպես Շատախի ներկայացուցիչ, Վարդանը մասնակցում է Թիֆլիսում կայացած ՀՅԴ II Ընդհանուր ժողովին: Որոշվում է նաև հայդուկային գործողություններով Եվրոպայի ուշադրությունը հրավիրել արևմտահայերի դժնդակ դրության վրա և «անգութ եվրոպացիների *գութը շարժել»*[24]*:*

Բաքվից Վարդանը գալիս է Շուշի, որտեղ հայրենասիրական քարոզչական գործունեություն է ծավալում: Նրա ջանքերի շնորհիվ այդ աշխատանքներին մասնակցում են նույնիսկ շուշեցի մեծահարուստների կանայք, որոնք «պատրաստ էին ամեն տեսակ նյութական աջակցության»[25]*: Նրանք գումար են հավաքում, ձիեր, հրացաններ են գնում ու նվիրում Վարդանին և նրա ընկերներին*[26]*: Վարդանի ելույթներից ոգևորված՝ շուշեցի մեծահարուստներից մեկի որդին՝ Մարգար Ժամհարյանը, ցանկություն է հայտնում անդամակցել հայդուկներին, սակայն հայրն արգելում է: Որդուն ուղարկում է Գերմանիա, ուր նա բժշկություն է ուսանում: Ցավոք, զոհվում է 1906 թ. հայ-թաթարական ընդհարումներից մեկի ժամանակ*[27]*:*

Շուշիից հեռանալիս մեծահարուստների կանայք Վարդանին ոսկյա ժամացույց են նվիրում. վերջինս փորձում է հրաժարվել, սակայն՝ ապարդյուն: Նա վկայում է. «Այդ ժամացույցն էր Խանասորի արշավանքի ժ[ամանա]կ, մթության մեջ հարձակման ժամը ցույց տվողը»[28]*:*

Խուդափիրինի կամրջով Վարդանը և Սևքարեցի Սաքոն Արցախից անցնում են Պարսկաստան: Մինչ այդ մի թուրքի միջոցով ունեցած զենքերը տեղափոխում են պարսկական տարածք: Առավել վտանգավոր էր, երբ անցնում էին Ղարադաղով[29]*: Ճանապարհին նրանց է միանում Ղարադաղի հայ մելիքներից մեկը, որը մանրամասն ներկայացնում է տեղի հայության ինքնապաշտպանական կռիվների մասին:*

Գալով Թավրիզ՝ ականատես են լինում, թե ինչ տենդագին արագությամբ է աշխատում տեղի «Խարիսխ» զինագործական արհեստանոցը: Վարդանը վկայում է, որ պարսկական իշխանությունները ոչ միայն տեղյակ էին զինագործական արհեստանոցի մասին, այլև այնտեղ էին ուղարկում իրենց բանակի սպառազինության մեջ գտնվող «Շասպո»[30] *հրացանները, որոնք պետք է*

---

[23] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 16:*

[24] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 7, թ. 1 շրջ.:*

[25] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 7, թ. 9 շրջ.:*

[26] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 7, թ. 9 շրջ.:*

[27] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 7, թ. 10:*

[28] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 7, թ. 10 շրջ.:*

[29] *Ղարադաղ, Կարադաղ, Սիա-Կուհ (Հայկական լեռներ) խանություն Պարսկահայքում՝ Ուրմիա լճի և Արաքսի միջև: Միջնադարում Վասպուրական աշխարհի գավառներից էր: Ավելի մանրամասն տե՛ս Հ ո վ ս ե փ յ ա ն. 2009, Ջ հ ա ն գ ի ր յ ա ն. 2021:*

[30] *Ֆրանսիական միալիցք հրացան, որը Ֆրանսիայում սպառազինության մեջ է գտնվել 1866–1874 թթ.: Ֆրանս-պրուսական պատերազմից հետո (1870–1871 թթ.) 20 հազար միավոր վաճառվել է Պարսկաստանին:*

«հարմարացնեին ուրիշ փամփուշտի: Մերոնք այդ գործը վերցրին և հաջողությամբ վերափոխման էին ենթարկում»[31]:

Զենքն ու զինամթերքը վստահելի մարդկանց միջոցով տեղափոխվում է Սալմաստ: Գավառի գյուղերում երիտասարդներին ուսուցանում են զինվորական գործ: Այդ ժամանակ ՀՅԴ կենտրոնը գտնվում էր Ղալասար գյուղում[32]:

Խանասորի արշավանքը

1895–1896 թթ.՝ արևմտահայության կոտորածներից հետո, ինչպես նշում է Վարդանը, կուսակցության հետագա գործունեության վերաբերյալ երկու կարծիք կար: Առաջինը պաշտպանում էին արևմտահայերը, որոնք գտնում էին՝ Երկրում անհրաժեշտ է ապստամբել, որը կստիպի միջամտել եվրոպական տերություններին՝ հօգուտ հայերի: Կուսակցության անդամների մյուս մասը, ընդհակառակը, գտնում էին՝ անհրաժեշտ է պատժել մազրիկ քրդական ցեղին՝ 1896 թ. ամռանը նահանջող վանեցիներին կոտորելու համար. դա կարող էր եվրոպացիների ուշադրությունը հրավիրել Հայկական հարցի վրա[33]: Ինչպես նշում է Վարդանը՝ «Կուսակցության կողմից որոշում կայացվեց մի մեծ արշավանք կազմակերպել դեպի Երկիր»[34]:

Սալմաստում սկսվում են արշավանքի նախապատրաստական աշխատանքները: Տարբեր վայրերից այստեղ են գալիս մեծ թվով հայդուկներ, որոնց կուտակումը հնարավոր չի լինում թաքցնել: Ե՛վ թուրքական իշխանությունները, և՛ քրդերը հասկանում էին, որ հայերը ինչ-որ բան են նախաձեռնել, սակայն՝ ի՞նչ, այդպես էլ մնում է անհայտ: Վարդանը վերհիշում է. «Քրդերը մեզ լուր էին ուղարկում, թե ինչո՞ւ չեք գալիս, ինչո՞ւ եք ուշանում, չէ՞ որ մենք փող չունենք, զենք չունենք: Նոքա ակնարկում էին Վանից եկող (1896 թ. հունիսին նահանջած – Ռ. Ս.) երիտասարդության, որոնց կոտորեցին, թալանեցին, բոլոր զենքերը և մոտները գտնված ահագին ոսկիները վերցրին: Ուզում էին ասել, թե հիմա էլ եկեք, որ ձեզ կոտորենք և զենքերն ու ... փողերը վերցնենք»[35]:

Վարդանը տեղեկացնում է, որ Սալմաստում էր գտնվում Վազգենի՝ 40 հոգուց կազմված խումբը, որոնց թվում էր «որպես հասարակ և անփորձ զինվոր, ապագա Անդրանիկը»[36]:

Հուշերում Վարդանն ընդգծում է այն փաստը, որ Սալմաստի հայությունը ոչինչ չէր խնայում, հյուրընկալում և աջակցում էր հայդուկներին, միաժամանակ նշում է՝ սալմաստցիների կողմից երբեք մատնության դեպքեր չեն եղել[37]:

---

[31] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 62:*
[32] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 7, թ. 12 շրջ.:*
[33] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 8, թ. 1:*
[34] *ՀԱԱ ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 7: Խանասորի արշավանքի դեմ էին նշանավոր հայդուկներ Իշխանը, Վարդանը, Վազգենը, Կարոն (տե՛ս Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան. 1950, 378):*
[35] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 8, թ. 1 շրջ.–2:*
[36] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 8, թ. 2 շրջ.:*
[37] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 43 և շրջ.:*

Խանասորի գործողության ղեկավար է ընտրվում Վարդանը, իսկ տեղակալ՝ հայ ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ Հովսեփ Իշխանը (Հովսեփ Արղության): Հայդուկների թիվը 275 էր, որից 25-ը՝ ձիավոր[38], 2 քահանա և 1 բժիշկ[39]: «Ձիավոր խմբի մեջ էր և ապագա Պարսկաստանի հեղափոխության[40] ժ[ամանա]կ դիկտատոր Եփրեմը[41], որը Պարսկաստանում ահագին դեր խաղաց»[42]: Արշավախմբին են միանում նաև մի խումբ արմենականներ՝ հայ ազատագրական շարժման գործիչ, արմենական Արմենակ Եկարյանի գլխավորությամբ, որոնք գնում էին Վան[43]:

Վաղօրոք պայմանավորվածություն կար, որ որևէ բռնություն չպետք է ցուցաբերեն քուրդ կանանց ու երեխաների նկատմամբ:

1896 թ. դեկտեմբերի 2-ին[44] տեղի է ունենում մի ցավալի դեպք, որին իր հուշերում Վարդանը հարկ է համարում անպայման անդրադառնալ: Բուռն սեր էր ծագել ուսուցչուհի Մ. Մակարյանի և զինագործ, հայ ազատագրական գործիչ, հայդուկ Արիստակես (Կարո) Զորյանի միջև, ով Ռոստոմի (Ստեփան Զորյան) կրտսեր եղբայրն էր: Վարդանի խոստովանությամբ՝ «Այդպիսի խելագար սեր ես չէի տեսել»[45]: Օրիորդը տեղյակ էր, որ Ա. Զորյանը մասնակցելու է արշավանքին, սակայն չէր կարող նրան ստիպել հրաժարվել մասնակցությունից: Վարդանի համոզմամբ, «եթե նա չլիներ ոչ գաղափարական աղջիկ, թերևս մտածեր, աշխատեր Արիսին խանգարել, ետ պահել Երկիր անցնելու մտքից, կամ եթե հնարավոր լիներ, որ ինքն էլ գնար, ինքն էլ մասնակցեր այդ արշավին, բայց ինչքան էլ ցանկանար՝ ֆիզիկապես անկարող էր»[46]: Եվ որպեսզի արգելք չլինի սիրեցյալի մտադրությանը, Փայջուկ գյուղում ինքնասպանություն է գործում: Սեղանին թողած գրությամբ բացատրում է ինքնասպանության պատճառը. «Ես չուզեցի քեզ խանգարել, այրել քո ետևից բոլոր նավերը, գնա քո սիրած գործի ետևից Արիս, Արիս, Արիս ...»[47]: Նկատենք, որ Ա. Զորյանը զոհվում է Խանասորի գործողության ժամանակ:

1897 թ. հուլիսի 24-ին Վարդանը գլխավորում է Խանասորի արշավանքը[48] մազրիկ քրդական ցեղի դեմ: Հուլիսի 27-ի վաղ առավոտյան սկսվում է գրոհը, սակայն, ցավոք, չի հաջողվում պատժել ցեղապետ Շարաֆին, որը կարողանում է թաքնվել ու փրկվել: Վարդանի հրամանով մարտիկները նահանջում են: Նրանց հետապնդում են մազրիկցիներին օգնության հասած քրդական

---

[38] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 8:*

[39] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 8 շրջ.:*

[40] *Նկատի ունի 1905–1911 թթ. Պարսկաստանում տեղի ունեցած հեղափոխությունը, որը երկիրը դարձրեց սահմանադրական միապետություն: Արդյունքում Պարսկաստանը բաժանվեց Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև (1907):*

[41] *Եփրեմ Դավթյան (Եփրեմ խան) – ազատագրական շարժման նշանավոր գործիչ, հայդուկ, ՀՅԴ անդամ:*

[42] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 8 շրջ.:*

[43] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 8, թ. 3 շրջ.:*

[44] *Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան. 1950, 378:*

[45] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 7, թ. 7:*

[46] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 7, թ. 8:*

[47] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 7, թ. 8 շրջ.:*

[48] *Ֆիշէր. 1897, № 13, 106–108, Ֆիշէր. 1897, № 14, 112–119:*

ուժերը: Վարդանի վկայությամբ՝ նահանջը չի կատարվում այնպես, ինչպես պլանավորել էին: Այնուամենայնիվ, հաջողվում է ազատվել հետապնդումից և հասնել Սալմաստ: Հայկական կողմից սպանվում է 19[49], քրդերի կողմից՝ շուրջ 300 հոգի[50]: Վարդանի գնահատմամբ՝ «Այդ արշավանքը ուժեղ տպավորություն գործեց քուրդ ցեղերի դեմ»[51]:

Արշավանքը նպատակ ուներ ոչ միայն վրեժխնդիր լինել մազրիկ ցեղից, այլև Երկիր զենքի ներկրման ու հայդուկային խմբեր ուղարկելու համար ճանապարհ բացել. «Այս դեպքը ևս աստիճանաբար փոխում է քրդերի վերաբերմունքը հայերի նկատմամբ: Նրանք սկսում են օգնել հայ զինատարներին՝ կատարելով ուղեկցողի դեր (վալլաղ), լավ իմանալով, որ հակառակ դեպքում ոչ մեկին չի խնայի հայ վրիժառուի գնդակը»[52]:

Օսմանյան իշխանությունները, որոնք տեղյակ էին, որ հայդուկները եկել են Սալմաստից, պարսկական կառավարությունից պահանջում են իրենց հանձնել նրանց: Պարսիկները, իրենց հերթին, ստիպված են լինում տեղի տալ և խստացնել հայերի նկատմամբ բռնությունները: Հատկապես ծանր դրության մեջ ընկան հայ վաճառականները[53]:

Ստեղծված իրադրությունից դուրս գալու համար որոշվում է ընտրել չարիքի փոքրագույնը: Հայդուկների և ՀՅԴ-ի հետ որևէ առնչություն չունեցող մի քանի երիտասարդների հանձնում են պարսիկներին, որոնք էլ, նրանց փոխանցում են թուրքերին: Վարդանի վկայությամբ՝ «Բայց հետո իմացանք, որ նրանց առանձին վնաս չի հասել»[54]:

1897 թ. ամռանը մի քանի հայդուկի հետ Վարդանը գալիս է Երևան, ապա՝ Էջմիածին, որտեղ տեղեկանում են՝ կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը ցանկանում է նրանց հետ հանդիպել: Հայդուկներին ներկայացնում են Վեհափառին: Նա հարցափորձ է անում սահմանն անցնելու, ռուսական իշխանությունների վերաբերմունքի մասին, ապա ասում է. «Լսել եմ, գնացել եք մի քանի քուրդ եք սպանել, այժմ գնացեք հանգիստ մնացեք, բոժոժի որդի պես մտեք բոժոժի մեջ, հանգստացեք, տեսնենք [թե] գլուխներիս ի՞նչ է գալիս»[55]: Եվ երբ Վարդանը հակաճառում է՝ ասելով, թե մի քանի քուրդ չեն, այլ 300 հոգի, կաթողիկոսը ««Ըշտե, ըշտե»,– ասելով հարցը փակեց»[56]:

Ս. Վրացյանի բնորոշմամբ՝ 1898 թ. հետո «Վարդանը ճանաչված դեմք է Ատրպատականի շրջանին մեջ: Ան մեր ամենեն փորձառու հայդուկներեն մեկը կնկատվի: Քաջությունն ու խելացիությունը խտացված են իր մեջ»[57]: Այդ ժամանակից նա հասարակությանը հայտնի էր որպես Խանասորի Վարդան:

[49] Զոհվածների ցուցակը տե՛ս «Դրօշակ» (ԺՆև), 1897, № 11, 83:
[50] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 12 շրջ.–13:
[51] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 8, թ. 11, գ. 1, թ. 13:
[52] Հայոց պատմություն. 2010, հ. 3, 568:
[53] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 14:
[54] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 8, թ. 12:
[55] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 8, թ. 12 շրջ.:
[56] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 8, թ. 12 շրջ.:
[57] Խանասորա Վարդանի Հիշատակարանը. 1992, 7:

1898–1899 թթ. Վարդանը Թիֆլիսում էր, Կարսում, ապա՝ Բաքվում, որտեղ բնակվում էր եղբոր մոտ: Որպեսզի ռուսական իշխանությունների կողմից, որպես դասալիք, հետախուզման մեջ չգտնվի, որոշում է՝ «օգտվել խաղաղ դրությունից, ներկայանալ զինվորական իշխանության և մնացած ծառայությունը շարունակել»[58]: Ծառայությունը, ծանոթ սպայի միջոցով, 10 ամիս շարունակում է Դիլիջանում, ապա զորացրվում է[59]:

Հուշերի շարադրումը և հրատարակումը «Դրօշակ» պարբերականում

1897–1899 թթ. Վարդանն աշխատում է իր հուշերի վրա: Եվ, ինչպես ինքն է նշում, «Գրեցի սկզբից մինչ Խանասորի արշավանքը, մոտ 400 էջ»[60]: Հուշերի համառոտ տարբերակը սկսում են տպագրել «Դրօշակ»-ում[61], սակայն այդ ընթացքում Վարդանը շարունակում է աշխատել ձեռագրի վրա: Ուստի դիմում է խմբագրությանը՝ խնդրելով դադարեցնել տպագրությունը, քանի որ ինքը որոշ լրացումներ է կատարում: Իր խոստովանությամբ՝ «Ես էլ ժամանակ չունեցա ընդարձակվելու (լրացումներ կատարելու – Ռ. Ս.) և այնպես էլ հիշատակարանը կորավ, գնաց Կ. Պոլսում, իսկ իմ ձեռագրերը, որ գտնվում էր Բաքու, մեր տանը, կառավարությունը խուզարկելով վերցնում, տանում է»[62]: Վարդանը նշում է, որ հուշերի վրա աշխատել է 7 տարի[63]:

Խորհրդային տարիներին, հավանաբար, Վարդանը տեղյակ չէր, որ Սիմոն Վրացյանը «Հայրենիք» ամսագրում տպագրել էր նրա 1894–1896 թթ. ընդգրկող հուշերը[64]: 1936–1937 թթ.[65] Վարդանը դրանք սկսել էր շարադրել ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի առաջարկությամբ, որից կարելի է եզրակացնել՝ խորհրդային իշխանությունները տեղյակ էին «Հայրենիք»-ում հուշերի տպագրման մասին: Հավանաբար, Հայաստանում նախատեսվող հուշերի տպագրությունն այլ նպատակ ուներ: Կարելի է ենթադրել, որ Վարդանը չի «արդարացրել» նրանց հույսերը, ուստի հուշերը չեն տպագրվել. ավելին, դրանք կորել են: Բարեբախտաբար, պահպանվել են հուշերի սևագիր 12 տետրերը, որոնք գտնվում են Հայաստանի ազգային արխիվում[66]:

Ս. Վրացյանը՝ Վարդանի հուշերի հրատարակիչը, որոշ պարզաբանումներ է տալիս: Հուշերը գտնվել են ՀՅԴ դիվանում: Տետրի վրա եղել է հետևյալ

---

[58] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 14:*

[59] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 14 շրջ.:*

[60] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 14 շրջ.:*

[61] *Հրատարակությունը կատարել է ՀՅԴ գործիչ, պատմաբան և փիլիսոփա Մ. Վարանդյանը (Հովհաննիսյան):*

[62] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 14 շրջ.–15:*

[63] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 15:*

[64] *Վ ր ա ց ե ա ն. 1936, № 12, 58–76, № 1, 85–115, № 2, էջ 124–140, № 3, 100–119:*

[65] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 2:*

[66] *Հուշերի վերնագիրն է՝ «Վարդանի հիշատակարանը. 1890 թ.–1918 թվերը: Գրի է առնված 1936–1937 թվերին Երևանում» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 2):*

մակագրությունը. «Արտագրէց Վահէ Սիւնի, 1901 թ. յուլիս 10»[67]: Ս. Վրացյանը նշում է, որ դրանք եղել են չորս ստվար տետրակներ[68]:

Ս. Վրացյանը դժգոհում է, որ «Հիշատակարանն» այնքան էլ հաջողված գործ չէ: Նրա արտահայտությամբ, «Գրիչը Վարդանի ձեռքին շատ յետ է մնում հրացանից: ... գրում է այնպէս՝ ինչպէս կը գրէր ուսում չստացած մի գիւղացի, անվերջ կրկնութիւններով ու միեւնոյն կաղապրուած ոճով եւ արտայայտութիւններով»[69]: Այնուամենայնիվ, Ս. Վրացյանը ստիպված է եղել ընդունել, որ «Վարդանի գրվածքը, այսպէս ասած մի թանկագին քար է իր նախնական վիճակում»[70]: Այս վերջին արտահայտությունը վկայում է, որ Ս. Վրացյանը փորձել է ընթերցողին ցույց տալ իր կատարած խմբագրական աշխատանքի կարևորությունը: Կարծում ենք, որ նման բան անթույլատրելի էր մի մարդու նկատմամբ, ով 1890 թ. իրեն նետել էր ազատագրական պայքարի հորձանուտի մեջ՝ կյանքը բազմիցս ենթարկելով ծանր փորձությունների:

1903[71] թ. Բաքվում՝ Վարդանի մոտ է գալիս Սիբիրսկի ազգանունով մի ռուս թղթակից, որը շատ էր հետաքրքրվում Հայկական հարցով, հայ ազատագրական պայքարով, և նրա խնդրանքով Վարդանը ներկայացնում է իր անցած ճանապարհը: Սիբիրսկին ամեն երեկո այցելում էր հայդուկին և խնամքով գրի առնում նրա հուշերը, սակայն, երբ Վարդանը տեղեկանում է մարտական ընկերոջ՝ հայ ազատագրական շարժման գործիչ, հայդուկ, ՀՅԴ անդամ Սևքարեցի Սաքոյի (Սարգիս Ծովանյան) մահվան մասին, հրաժարվում է թղթակցի հետ հետագա համագործակցությունից: Վարդանը և Սարգիսը մտերիմ ընկերներ էին. այդ մասին վկայում է Վարդանը. «Մենք շատ մտերիմ ընկերներ էինք ... Սաքոն պայման էր դրել, ասում էր՝ «Վարդան, եթէ ես շուտ մեռնեմ դու կգաս ինձ թաղելու, թէ դու շուտ մեռնես՝ ես կգամ քեզ թաղելու»»[72]: Վերջինս ցավով է հիշում իրենց պայմանավորվածությունը, սակայն չի կարողանում կատարել խոստումը, քանի որ Սևքարեցի Սաքոն վարակիչ հիվանդության՝ խոլերայի զոհ էր[73]:

Կիլիկիայում գործունեություն ծավալելու նախադրյալները

1904 թ. փետրվար–մարտին Սոֆիայում կայացած ՀՅԴ III Ընդհանուր ժողովը վճռում է ակտիվացնել գործունեությունը Կիլիկիայում: Ժողովը հանձնարարում է հայ ազատագրական և քաղաքական գործիչ, ՀՅԴ հիմնադիր անդամ Սիմոն Զավարյանին իրականացնել որոշումը, իսկ Վարդանին՝ աջակցել: Նրանք անցնելու էին Կիլիկիա, որպեսզի «զբաղին Լեռնավայրի (Կիլիկիայի – Ռ. Ս.) յեղափոխական կազմակերպութեամբ»[74]: Վարդանն առաջին հերթին ձեռնամուխ է լինում զենք և զինամթերք հայթայթելու գործին:

[67] Վ ր ա ց ե ա ն. 1936, № 12, 59:
[68] Վ ր ա ց ե ա ն. 1936, № 12, 59:
[69] Վ ր ա ց ե ա ն. 1936, № 12, 59:
[70] Վ ր ա ց ե ա ն. 1936, № 12, 59:
[71] Հավանաբար 1908 թ.:
[72] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 15 շրջ.:
[73] С и б и р с к и й. 1916, № 16, 2–6; № 17, 3–6; № 18, 2–5; № 19, 8–11; № 20, 4–7; № 21, 4–8.
[74] Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 178:

Սկզբնական շրջանում գնում են 3 հրացան ու 2 ատրճանակ, որոնք տեղափոխում են Այնթապ[75]: Վարդանի համոզմամբ՝ Կիլիկիայում ազատագրական պայքարը կարող էր հաջողության հասնել միայն տեղացիների ակտիվ մասնակցությամբ, ուստի առաջնահերթ խնդիր էր համարում գտնել «ձեռնահաս թրքահայ գործիչ»[76]: Հայտնի է, որ ավելի վաղ՝ 1890-ական թվականների կեսերին, Կիլիկիայում են եղել հայ ազատագրական շարժման և ՀՅԴ գործիչներ Մկրտիչ Հատիկյանը, Հայկ Թիրաքյանը, Միքայել Տեր Մարտիրոսյանը (Մար)[77] և այլոք: Ավելի վաղ՝ 1890-ական թվականների սկզբներին գործունեություն են ծավալել Հնչակյանները:

Առաջինը մեկնում է Ս. Զավարյանը, սակայն ոչ թե Կիլիկիա, այլ՝ Բեյրութ իրավիճակն ուսումնասիրելու համար: Որոշ ժամանակ անց նա Վարդանին տեղեկացնում է նրա ներկայության անհրաժեշտության մասին: 1904 թ. օգոստոսի 24-ին Վարդանը և հայ ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ Վռամյանը (Արշակ Վռամյան) ճանապարհվում են Կ. Պոլիս, ուր տեղ են հասնում օգոստոսի 31-ին, այստեղից էլ՝ ճանապարհվում Ժնև, ուր ժամանում են սեպտեմբերի 7-ին[78]:

«Դրոշակ»-ի խմբագրությունում Վարդանը ծանոթանում է Կիլիկիայից ստացված տեղեկությունների հետ, որոշ պատկերացում է կազմում անծանոթ վայրի մասին: Առավել մանրամասն տեղեկություններ է հայտնում Սարհատը, որին անվանում էին «Դոկտոր»[79]: Նա հայտնում է, որ Բեյրութում տեղի ունեցած ՀՅԴ ժողովում որոշվել է՝ հայթայթել մոտ 500 հրացան, փամփուշտ, ուժանակ և դրանք ուղարկել Կիլիկիա[80]: Այս գործի համար կուսակցությունը տրամադրել էր բավականին մեծ գումար՝ շուրջ 20 հազար ֆրանկ[81]: Վարդանը դեմ է լինում այդ ծրագրին՝ գտնելով, որ առաջին հերթին պետք է գնալ Կիլիկիա, ծանոթանալ իրադրությանը, որից հետո դիմել գործնական քայլերի: Նրա կարծիքը, սակայն, չի ընդունվում, ուստի ստիպված էր համաձայնվել 100 հրացան ու համապատասխան քանակությամբ փամփուշտ գնելու և Կիլիկիա ուղարկելու որոշմանը[82]:

1904 թ. հոկտեմբերի 20-ին Ռոստոմի, Հունանի[83], Վռամյանի և Սարհատի հետ ճանապարհվում են Փարիզ՝ զենք գնելու համար, որտեղ Վարդանը ծանո-

---

[75] Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 222:

[76] Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 1985, 255:

[77] Նրա մասին մանրամասն տե՛ս Գասպարյան, Սահակյան. 2015, 197–233:

[78] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 18:

[79] Այս անձնավորության մասին տեղեկությունները սակավ են: Հայտնի է, որ մասնակցել է ՀՅԴ IV Ընդհանուր ժողովին՝ որպես Լեռնավայրի (Կիլիկիա) պատգամավոր, որի լիազորությունները, սակայն, կասեցվել են ժողովի կողմից: Հավանաբար, պատճառը կուսակցության դրամի վատնելն է եղել (տե՛ս Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 1982, 18–19):

[80] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 18:

[81] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 18 շրջ.:

[82] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 18 շրջ.:

[83] Դավթյան Հունան (Հոնան, Նանոյան, 1865–1918), – ազատագրական շարժման գործիչ, մանկավարժ, ՀՅԴ տեսաբան, Ներսիսյան դպրոցի շրջանավարտ: Ուսանել է քաղաքագիտություն Ժնևի համալսարանում, խմբագրել՝ «Յառաջ» թերթը (1905–1906):

թանում է "Pro Armenia" թերթի խմբագիր Պիեռ Քիյառի[84] հետ: Այստեղ տեղեկանում են, որ հրազենի գնման առավել նպաստավոր վայրը Հունաստանն է, ուստի հոկտեմբերի 27-ին Սարհատը և Վարդանը նավով մեկնում են այդտեղ[85]: Աթենքում հաջողվում է գնել «Գրա»[86] մարտական հրացաններ, մի քանի հազար փամփուշտ և դրանք լիցքավորելու գործիքներ[87]: Առավել բարդ էր զենքի ու զինամթերքի փոխադրության հարցը. Սարհատին հաջողվում է պայմանավորվել մի հույն մաքսանենգի հետ, որը գումարի դիմաց խոստանում է դրանք փոխադրել անհրաժեշտ վայր:

Ավելորդ ուշադրությունից զերծ մնալու համար՝ Վարդանը ձեռք է բերում պարսկահպատակի անձնագիր՝ ասորի Յովհաննա Յաղուբ անունով, որը, իբր, գորգերի վաճառական էր[88]: Վարդանի խոստովանությամբ՝ «Երբեք լեգալ կերպով Տաճկաստան չեմ մտել և երբեք այնքան չեմ մտածել, ինչպես այժմ: Շարունակ մտածում եմ, թե հարցափորձի ժամանակ ինչ պատասխան պետք է տամ: Ես ինձ պատրաստում եմ, շարունակ կրկնում եմ, որ թավրիզեցի եմ, հորս անունը, մորս անունը, որ թաղեցի եմ և [այլ]ն, և [այլ]ն, իսկ որովհետև ասորերեն չգիտեմ, դրա համար էլ կասեմ «Փոքր ժամանակվանից հեռացել եմ» և [այլ]ն, և [այլ]ն»[89]:

Բեյրութում «Օրիենտալ» հյուրանոցում Վարդանին սպասելու էր Ս. Զավարյանը, սակայն, ինչպես պարզվում է, նա գտնվում էր Ադանայում: Որոշ ժամանակ անց Վարդանին հաջողվում է կապ հաստատել կուսակցական ընկերներից՝ տրապիզոնցի Սիմոն Շատիկյանի հետ: Վերջինս ներկայանում էր իտալացի Ջոնգոլի Վիտո անունով[90]:

Բեյրութում ծանոթանալով տեղի և, հատկապես, Կիլիկիայի իրադրության մասին՝ պարզվում է, որ ո՛չ Հալեպում, ո՛չ էլ Կիլիկիայում դաշնակցական կազմակերպություններ չկան, Վարդանի խոսքերով՝ «Մարդիկ չկան, այլ կան բառեր, անուններ, ուրիշ ոչինչ»[91]: Նա հարկադրված է լինում այդ մասին ժնև հաղորդել:

Վարդանը մեկնում է Հալեպ, ճանապարհին լինում է Համա և Հոմս քաղաքներում, ծանոթանում իրադրությանը: Հալեպում կապ է հաստատում տեղի լուսանկարիչ Գրիգոր Մարյանի հետ: Այնուհետև անցնում է Քիլիս, ապա՝ Այնթապ, որտեղ ՀՅԴ ներկայացուցիչն էր Խաչատուր Սեյիսյանը՝ Ավոն: Այնթապը համարվում էր Դաշնակցության կենտրոնատեղին Կիլիկիայում, սակայն Վարդանի գնահատմամբ՝ «Ավոն պարապ մարդ էր, ոչնչով չէր պարապում և ապրում էր կազմակերպության փողով: Մի քանի ընկերներ ուներ, որոնք իրենցից ոչինչ չէին ներկայացնում»[92]:

---

[84] Քիյառ Պիեռ (1864–1912) – ֆրանսիացի բանաստեղծ, հասարակական գործիչ: Հեղինակ է Հայկական հարցի վերաբերյալ աշխատությունների:

[85] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 19:

[86] Միալիցք մարտական հրացան, արտադրվել է Ֆրանսիայում (1874):

[87] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 19 շրջ.:

[88] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 22 և 22 շրջ.:

[89] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 22 շրջ.:

[90] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 24:

[91] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 24 շրջ.:

[92] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 28: Վարդանը նշում է, որ Ավոն ՀՅԴ ֆինանսական օժանդակությամբ բժշկական կրթություն ստացավ և սկսեց պախարակել կուսակցությանը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 30 շրջ.):

Այնթապի կազմակերպությունը կուսակցությունից պահանջել էր մի քանի հարյուր հրացան: Դա արվել էր, հավանաբար, ազատագրական պայքարին միանալու իրենց «պատրաստակամությունը» ցուցադրելու համար: Տեղացիները շատ լավ հասկանում էին, թե որքան դժվար կլինի նման քանակությամբ զենք ու զինամթերք տեղափոխել Այնթապ:

Կազմակերպության պատրաստակամությունը ստուգելու համար Վարդանը դիմում է խորամանկության. այնթապցիներին հայտնում է, որ զենքի մի մասն արդեն քաղաքում է, ուստի անհրաժեշտ է դրանք տեղափոխել անվտանգ վայր: Նրա վկայությամբ՝ «Բոլորն էլ շշմած մնացին և ոչ մեկը կարողացավ մի որևէ քայլ անել այդ ուղղությամբ»[93]: Այս ամենը և այլ մանրամասներ իմանալուց հետո Վարդանը խոստովանում է. «Դորանց տեսնելով, վասպուրականցիք իմ աչքում շատ բարձրացան, կարոտել էի վանեցոց»[94]:

Այնուամենայնիվ, Վարդանը գտնում է, որ Կիլիկիայում հնարավոր է գործունեություն ծավալել՝ հաշվի առնելով նրա աշխարհագրական դիրքը: Հարմար է զենք, զինամթերք և մարտիկներ տեղափոխելու համար: Նրա կարծիքով՝ «Այստեղի մի հրացանի պայթյունը ավելի է լսելի և ուշադրության արժանի, քան Հայաստանի այնքան հերոսական կռիվները, որոնք անհայտության մեջ կորչում են»[95]:

Արցախի ինքնապաշտպանության ղեկավար

ՀՅԴ-ն, ամբողջովին կլանված լինելով Արևմտյան Հայաստանով, անուշադրության էր մատնել արևելահայության հետ կապված հիմնախնդիրները, հատկապես՝ ինքնապաշտպանության կազմակերպումը: Բոլորի համար անսպասելի էր 1905 թ. փետրվարին սկսած և աստիճանաբար ահագնացած հայ-թաթարական ընդհարումները[96], որոնց դրդողը ռուսական իշխանությունն էր: Անուշադրության էր մատնվել նման հնարավորությունը, երբ կար տեղեկություն, որ 1903 թ. վերջին «կառավարությունը հրաւիրել էր թուրք բէգերին օգնութեան հայերի դեմ, բայց վերջինները հրաժարուել էին»[97]:

Այնուամենայնիվ, կառավարությունը շարունակում է սադրանքները, իշխանամետ մամուլը հակահայ հոդվածներով նախապատրաստում է ապագա հայ-թաթարական ընդհարումները՝ տպագրելով հերյուրանքներ և ապատեղեկատվություն[98]: Ռուսահպատակ կովկասյան մահմեդականներին աջակցում են Օսմանյան կայսրության և Պարսկաստանի հավատակիցներն ու ցեղակիցները[99]: Կովկասի կառավարչապետության, ապա փոխարքայության հայութ-

---

[93] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 28 շրջ.:*

[94] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 29 շրջ.:*

[95] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 33:*

[96] *Դեռևս 1888 թ. հունվարի 5-ին՝ Սբ. Ծննդյան տոնի նախօրյակին, ոմն Սուլթան բեկի կողմից Երևանի շուկայում սպանվում է երկու հայ: Սկսվում է իրարանցում, որի ընթացքում սպանվում են տասից ավելի հայեր ու թաթարներ: Մարդասպանին պատժելու փոխարեն՝ իշխանությունները տարբեր պատժաժամկետների՝ 4-ից 12 տարով, դատապարտում են հինգ հայերի (տե՛ս Ա-Դ ո. 2013, 30–31):*

[97] *Տե՛ս Նիլթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 303–304:*

[98] *Հայոց պատմություն. 2015, 19:*

[99] *Հայոց պատմություն. 2015, 20:*

յան ինքնապաշտպանությունը հիմնականում ստանձնում է ՀՅԴ-ն, որի «կազմակերպման կենտրոնական դեմքը Ռոստոմն էր»[100]: Վարդանը փաստում է հետևյալը. «Դաշնակցությունը որպես մարտական կուսակցություն, որպես հայ ժողովուրդի մարմնացած ժողովրդական, նորա պահանջների, ցանկությունների արտահայտիչը, հանդիսատեսի դերում լինել չէր կարող և ոչ մի խաղաղասիրական քարոզներ և ձեռնարկումներ անօգուտ էին, ուզեր, [թե] չուզեր պետք է անցներ շարժումը ղեկավարելու»[101]:

1905 թ. հուլիսին կուսակցությունը Վարդանին[102] նշանակում է «Ղարաբաղի՝ սկսած Գանձակի մոտից մինչև Մեղրիի շրջանի ընդհանուր ղեկավար»[103]: Նրա հետ Արցախ են գալիս հայ ազատագրական շարժման գործիչներ, ՀՅԴ անդամներ Մռավը (Մարգար Ժամհարեան), Խեչոն (Խաչատուր Ամիրյան-Գևորգյան), Կայծակ Առաքելը (Տիգրան Աբաջյան), Սևքարեցի Սաքոն, Սեպուհը (Արշակ Ներսիսյան), Համազասպը (Համազասպ Սրվանձտյանց), Կոտոյի Հաջին (Հակոբ Կոտոյան) և ուրիշներ: Դիմադրությունը ղեկավարելու համար կազմակերպվում է Զինվորական մարմին:

Գալով Շուշի՝ Վարդանը կուսակցական ընկերների, տեղի աչքի ընկնող քաղաքացիների մասնակցությամբ մի քանի ժողովներ է գումարում, որտեղ առաջին հերթին ցուցում է տալիս խուսափել կռիվներից, սակայն նախապատրաստվել ինքնապաշտպանության: Նրա հրամանով Շուշին բաժանվում է մի քանի պաշտպանական շրջանների, նշանակվում են շրջանապետեր, որոնց պարտականություններն էին՝ դիրքերի ընտրությունը, կահավորումը, մարտիկների զինումը, պարենավորումը և այլն[104]:

Շուշիի[105] աննման նկարագրությունն է տվել Ա-Դոն, որի գնահատմամբ Արցախն իրենից բերդ է ներկայացնում, «ուր բազմած Շուշին, որպէս սրաթև արծիւը, մի առանձին հպարտութեամբ, իշխում է իր առաջ ձգած տարածութիւնների վրա»[106]: Վարդանի գնահատմամբ էլ՝ «Ամբողջ Ղարաբաղի (Արցախի – Ռ. Ա.) սիրտը, կենտրոնը Շուշին էր, բոլորը աչքերը հառած քաղաքին էին նայում»[107]:

1905 թ. մայիսի 12-ին Նախիջևանում սկսվում է հայ-թաթարական ընդհարումը, որը, Ա-Դոյի գնահատմամբ, « ... ոչ թե ընդհարում էր, այլ հարձակում, սպանություն, կողոպուտ, որը տարածվեց Նախիջևանի շրջանի բոլոր հայա-

---

[100] *Հայոց պատմություն. 2015, 21:*

[101] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 33 շրջ.:*

[102] *Վարդանի թեկնածությունն առաջարկել էր Նիկոլ Դումանը (տե՛ս Գևորգյան. 2010, 321): Ս. Վրացյանի բնորոշմամբ՝ «Վարդանը քիչ մը վարանոտ է, մինչ Նիկոլ Դումանը վճռական և արագ մտածող» (տե՛ս Խանասորա Վարդանի Հիշատակարանը. 1992, 7–8):*

[103] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 36 շրջ.: Ժողովի որոշման մեջ նրա պաշտոնը կոչվում էր «զինուորական լիազօր» (տե՛ս Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 304):*

[104] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 37:*

[105] *Շուշիի բնակչության թիվը 33 հազար էր, որից հայերը՝ 18 հազար, իսկ թաթարները՝ 14 հազար և այլ ազգություններ՝ 1 հազար (տե՛ս Ա-Դ օ. 1907, 148):*

[106] *Ա-Դ օ. 1907, 152:*

[107] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 13:*

բնակ գյուղերում»[108]*: Նախիջևանը կարծես ազդանշան եղավ, որ հնարավոր է՝ բախումները տեղափոխվեն Սյունիք, ապա՝ Արցախ:*

Շուշիում բախումներ հրահրելու խնդրում իր «սև» գործն է կատարում հետադիմական մամուլը՝ կանխամտածված ապատեղեկատվություն տպագրելով: 1905 թ. օգոստոսի 8-ին Բաքվի «Каспий» *թերթում տպագրվում է Շուշիից ուղարկված սադրիչ հեռագիր, ուր ասվում էր. «Գիշերուայ ժամը 3-ին երեք հայեր մեծ կօշիկներով (ընդգծումը մերն է – Ռ. Ս.) և բրդոտ փափախներով, խէնջարներով կտոր կտոր արին մի լապտերավառ և փախան»*[109]*:*

Վարդանը, կանխատեսելով հնարավոր բախման հնարավորությունը, օգոստոսի 10-ի նամակում, հավանաբար ՀՅԴ Արևելյան բյուրոյին ուղղված, պահանջում է շտապ զենք և զինամթերք ուղարկել: Կազմակերպչական հրահանգներ են տրվում գավառներին. կազմակերպվում են պարեկային կամ շրջիկ խմբեր[110]*: Եթե նման հարցերը համեմատաբար հեշտ են լուծվում, սակայն բաց էր մնում զենքի խնդիրը: Վարդանը հուշագրում է. «Մեր ժողովուրդը սովոր չէր զենքի, այդ զենքին սովոր էին թուրքերը: Եվ մեր զինման գործը անցնում էր ճնշման, բռնության տակ»*[111]*:*

Օգոստոսի 16-ին Շուշիում բռնկվում է հայ-թաթարական ընդհարում: Վարդանը վկայում է. «Կռվում են տներում, բակերում շինված դիրքերից, կռիվը շարունակվում է գիշեր և ցերեկ»[112]*: Թշնամուն օգնության էին եկել գավառաբնակները: Վարդանն արձանագրում է. «Սկզբնական շրջանում ես մեծ կարծիք ունեի քաղաքացիների քաջության, կռվի ընդունակության վրա, բայց կռվի ընթացքում տեսա, որ խաբված եմ եղել»*[113]*:*

Քաղաքի ռուսական զորքը բաժանվել էր երկու մասի. թուրքերի շրջանում գտնվող զինվորներն ու սպաները կռվում էին նրանց կողմից, իսկ հայկական թաղում գտնվողները՝ հայերի կողմից: Վարդանը վկայում է այն հերոսական և անձնուրաց աշխատանքի մասին, որ կատարում էին աշակերտներն ու աշակերտուհիները՝ օգնելով ուտելիք պատրաստել՝ վիրավորներին խնամելով, տարրական բուժօգնություն ցուցաբերելով և փամփուշտներ լիցքավորելով[114]*: Վիրավորներին ու հիվանդներին բուժելու և խնամելու համար գործում են սանիտարական խմբեր: Թաղապետերը կազմակերպում են զինվորական ճաշարաններ, որտեղից ուտելիք և ջուր էին տանում դիրքերում գտնվող մարտիկներին: Զինվորական մարմնի ու դիրքերի միջև կապը պահպանվում էր կապավորների կողմից: Հատուկ խմբերը փամփուշտ էին հասցնում մարտիկներին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ փոխարինում նրանց: Հետախուզական խմբերը, տեղակայվելով Շուշիի մերձակա ձորերում, հսկում էին թշնամու տեղաշարժը և այլն*[115]*: Մարտերին մասնակցում են Շուշիի հնչակյան մաս-*

---

[108] *Ա-Դ օ. 1907, 116:*
[109] *Ա-Դ օ. 1907, 147:*
[110] *Գևորգյան. 2010, 325:*
[111] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 37:*
[112] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 38 շրջ.:*
[113] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 39:*
[114] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 39:*
[115] *Գևորգյան. 2010, 364–365:*

նաճյուղի 12–16 մարտիկներ. Վարդանի գնահատմամբ՝ կռիվներում «քաջ են եղել»[116]:

Առաջին օրը սպանվում են շուրջ 20 հայեր և թաթարներ[117]: Վերջիններս հայերի տների վրա հարձակման նոր մարտավարություն էին ընտրել՝ հրդեհումներ են կատարում: Հակառակորդի օրինակով հայերը կազմակերպում են հրդեհաձիգների խմբեր, որտեղ ընդգրկվում են նույնիսկ 14 տարեկան պատանիները: Գործում են նաև բնակիչներից կազմված հրշեջների խմբեր, որոնք ունեին երկու հրշեջ մեքենա, տակառներով ջուր և համապատասխան գործիքներ:

Օգոստոսի 18-ին Աղդամից օգնության են գալիս մեծ թվով թաթարներ: Հայերը, փոխնահանգապետի հրամանը հարգելով, չեն կրակում, որից օգտվում են թաթարները և հարձակվում շուշեցիների վրա: Իշխանությունն առանց պաշտպանության է թողնում հայկական թաղամասը՝ հայտարարելով, որ հայերն իրենք պետք է հոգան իրենց պաշտպանությունը: Ա-Դոյի կարծիքով՝ «Այս կուսեցնելու ամենալաւ միջոցն էր և կառավարութեան ընդունած տակտիկան»[118]: Դրա վկայություններից մեկն էր պաշտոնական այն հայտարարությունը, որով հերքվում էր Շուշիում տեղի ունեցած բախումների մասին տեղեկատվությունը[119]:

Վարդանը, տեղեկանալով, որ հայկական թաղամասում գտնվող իրենց տներում մնացել են մի քանի թաթար ընտանիքներ, հրամայում է նրանց տեղափոխել հայերի տները և ապահովել նրանց անվտանգությունը[120]:

Մարտերից մեկի ժամանակ Վարդանի մոտ է գալիս շուշեցի մի արհեստավոր ու հայտնում՝ քաղաքային ակումբի սյունները XIX դարի թնդանոթներ են, որոնք արտաքինից պատված են գաջով, և առաջարկում է դրանք օգտագործել: Վարդանի վկայությամբ՝ «Թնդանոթը մի հսկայական բան էր, ահագին ծանրությամբ, մոտ 100 փութ (1 փութը հավասար է 16 կգ – Ռ. Ս.)»[121]: Մեծ դժվարությամբ թնդանոթը տեղակայում են Հունոտի ձորի դիմաց գտնվող սարի գագաթին:

Օգոստոսի 20-ին հայերը գործածության մեջ են դնում հին, ողորկափող թնդանոթները, որոնց համազարկը, թեև ոչ մի վնաս չի պատճառում, սակայն այնպիսի դղրդյուն և ծուխ են բարձրացնում, որ «թուրքերը սպիտակ դրոշ բարձրացրին և հաշտութիւն խնդրեցին, որը և տեղի ունեցավ նոյն օրը»[122]:

Օգոստոսի 22-ին կողմերը հաշտություն են կնքում, այնուհետև քննում են կորուստները: Այրվել էին հայերի հարյուրավոր տներ, այդ թվում՝ Մարիամյան դպրոցը, եկեղեցապատկան 20 խանութ և թատրոնը: Հայերից զոհվել են 100, իսկ թուրքերից՝ կրկնակի կամ եռակի թվով: Թշնամին ունեցել էր 30 հազարի, իսկ հայերը՝ 5 միլիոն ռուբլուց ավելի գույքային կորուստ[123]:

---

[116] *Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 305:*
[117] *Ա-Դ օ. 1907, 153:*
[118] *Ա-Դ օ. 1907, 155:*
[119] *Ա-Դ օ. 1907, 157:*
[120] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 41 շրջ.:*
[121] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 40 շրջ.:*
[122] *Ա-Դ օ. 1907, 156, ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 42:*
[123] *Ա-Դ օ. 1907, 156:*

1905 թ. Շուշիի հայ բնակչությունն այսքան ծանր կորուստներ էր ունեցել, քանի որ թաթարներին միացել էր նաև զորքը, որի «զազիր գործողություններն այնպիսի չափերի հասան, որ Շուշիի հայ կանայք ստիպված եղան մի ընդարձակ հեռագրով դիմել կայսրուհուն»[124]*:*

1906 թ. գարնանը Շուշի է գալիս Ռոստոմը: Նրա երկու ամսվա ներկայությունը դրական նշանակություն է ունենում: Ռոստոմը ոչ միայն ամրապնդում է ՀՅԴ կառույցները, այլև օժանդակում է լուծելու «ինքնապաշտպանության հետ կապված հույժ կարևոր մի շարք խնդիրներ: Նա Շուշիում գտնվող վարպետների, նրանց թվում հայ ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ Կոստի (Կոստանդին) Համբարձումյանի աջակցությամբ պատրաստում և փորձարկում է ռումբեր ու հրթիռներ»[125]*: Համատեղ ուժերով կարողանում են վերանորոգել կամ վերականգնել հին, ողորկափող թնդանոթները*[126]*:*

1906 թ. հուլիսի 12–22-ը Շուշիում տեղի ունեցավ հայ-թաթարական երկրորդ ընդհարումը: Հուլիսի 12-ի առավոտյան գտնվում է շուշեցի Սահակ Միրզոյանցի դիակը: Զինվորականները գալիս են դեպքի վայր՝ հետաքննություն կատարելու նպատակով, սակայն թաթարները կրակ են բացում: Սկսում է փոխհրաձգություն: Այն բանից հետո, երբ թաթարների կրակից սպանվում է երկու զինվոր, զորքերի հրամանատար գեներալ Վ. Գոլոշչապովը[127] *հրամայում է հրետանակոծել թաթարական թաղամասը: Դրանից կատաղած թաթարները նշանառության տակ են վերցնում գեներալի տունն ու նրան մեղադրում, «որ իբր նա հայերի հետ միացած ռմբակոծում, կոտորում էր իրենց անխնայ»*[128]*:*

Հաշվի առնելով նախորդ տարվա ընդհարումների փորձը՝ թշնամին քայլեր է ձեռնարկում ամբողջությամբ շրջափակել քաղաքը՝ հայերին զրկելով պարենի մատակարարումից: Ի պատասխան՝ Ասկերանի հայությունը ոչ միայն փակում է թուրքերի մատակարարման ճանապարհը, այլև ծանր հակահարված է հասցնում Աղդամից առաջացող հրոսակներին՝ զգալիորեն թեթևացնելով շուշեցիների դրությունը: Վարդանի վկայությամբ՝ «Ասկերանը թուրքերի աչքի փուշն էր, այդտեղ շատ կռիվներ են եղել և (թաթարները – Ռ. Ս.) միշտ ջարդվել են»[129]*:*

---

[124] *Ա-Դ ո. 2013, 132: 1907 թ. ապրիլի 20-ին Վիեննայի ՀՅԴ IV Ընդհանուր ժողովին ներկայացրած հաշվետվությունում Վարդանը և Սևքարեցի Սաքոն հիմնականում դրական են գնահատում զորքի վերաբերմունքը: «Պիտի ասեմ, որ մեր կողմերում պետական զինուորների եւ սպաների համակրանքը ընդհանրապէս մեր կողմն է եղել» (տե՛ս Նիմեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 92):*

[125] *Գ և ո ր գ յ ա ն. 2010, 361:*

[126] *Գ և ո ր գ յ ա ն. 2010, 361:*

[127] *Ա-Դոյի վկայությունից հետևում է, որ գեներալ Վ. Գոլոշչապովն անաչառ անձնավորության տպավորություն է թողնում. «Անաչառ ու անկեղծ պաշտօնեայ քաղաքական այդպիսի պայմաններում դժար էր գտնել, բայց և այնպէս հայերը գոհ մնացին նրանից» (տե՛ս Ա-Դ օ. 1907, 162): Անհայտ պատճառով գեներալին հեռացնում են Շուշիից, սակայն հայերի խնդրանքով փոխարքան նրան 1906 թ. մայիսին կրկին ուղարկում է Շուշի (Ա-Դ օ. 1907, 163): Վ. Գոլոշչապովը սպանվել է 1906 թ. Թիֆլիսում թաթար ահաբեկչի կողմից:*

[128] *Ա-Դ օ. 1907, 164:*

[129] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 11:*

Հուլիսի 13-ին մարտերը շարունակվում են ավելի մեծ թափով, սակայն առանց զորքի միջամտության: Հատկապես համառ մարտեր են ծավալվում Քարինտակ և Ղայբալի հայկական գյուղերի շրջանում:

Հուլիսի 22-ին հաշտություն է կնքվում:

Կռիվների ընթացքում հայերն ունենում են 24 սպանված և 102 վիրավոր, իսկ թաթարները՝ կրկնակի ավելի: Հրդեհվում են 200-ից ավելի տներ, որոնց մեծ մասը պատկանում են թաթարներին[130]*:*

Ընդհանուր առմամբ, 1905 թ. բախումները ցույց տվեցին, որ հայերն անպատրաստ են եղել մարտական խոշոր գործողություններ վարելու[131]*: Իրադրությունը փոխվեց 1905 թ. վերջին, երբ հայ բնակչությունն որոշակի մարտական փորձ ձեռք բերեց, հայթայթեց անհրաժեշտ քանակությամբ զենք ու զինամթերք*[132]*, որից հետո ՀՅԴ կովկասյան ռայոնական ժողովը որոշում է 1905 թ. վերջին անցնել հարձակողական գործողությունների*[133]*: Երբ հայերը թաթարների նման սկսեցին վերաբերվել բնակչության և նրանց ունեցվածքի նկատմամբ, Վարդանի վկայությամբ, «թուրքերը սարսափահար եղան: ... Երբ նոցա ասում [ենք], թե դուք էլ եք նույն վերաբերմունքը ցույց տվել, նոքա (թաթարները – Ռ. Ս.) պատասխանել են, թե մենք տգետ ենք, դուք չպետք է անեք մեզ նման»*[134]*:*

Հավանաբար, 1906 թ. դեկտեմբերին, երբ Արցախում իրավիճակը համեմատաբար կայունացել էր, իշխանությունները, հորինելով, այսպես կոչված, «Դաշնակցության գործը», սկսում են հայ-թաթարական կռիվների մասնակիցների հետապնդումը և ձերբակալությունը. Վարդանը Շուշիից մեկնում է Թիֆլիս[135]*, ապա՝ Բաքու:*

Հարկ է նշել, որ Արցախի հայության ինքնապաշտպանությանը լուրջ վտանգ էին ներկայացնում ներքին թշնամիները[136]*: Դրանցից էին, օրինակ, Վարանդայի Քյաթուկ գյուղի բնակիչներ Հաթամ բեկն ու նրա եղբայր Շամիլը: Եղբայրների ազգադավ գործողություններին վերջ տալու համար Վարդանը հանդիպում է Հաթամ բեկին, փորձում է նրան համոզել, սակայն վերջինս մնում է անհողդող: Ի վերջո, Վարդանի հրամանով եղբայրները գնդակահարվում են իրենց գյուղում*[137]*:*

Մ. Վարանդյանի բնութագրմամբ էլ՝ «Վարդանը՝ մեղմ, փափուկ սրտի տէր, երբեմն փոքր-ինչ վարանոտ, անվճռական ... երբ նա ընդհանուր հրամանա-

---

[130] *Ա.-Դ օ. 1907, 167:*

[131] *Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 304:*

[132] *Շուշեցիներն ունեին շուրջ 300 հրացան, ՀՅԴ-ն էլ կուտակել էր 200 հրացան և 250000 փամփուշտ (տե՛ս Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 304):*

[133] *Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 304:*

[134] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 2–3:*

[135] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 28:*

[136] *Վերհիշենք Ռուբենի դիպուկ բնորոշումը. «Եթէ ազգութեան մէջ չլինին դաւաճաններ եւ մատնիչներ, իշխանութիւնը իր բոլոր միջոցներով անգօր կը դառնայ, նոյն իսկ իր գաղտնի ոստիկանութիւնը անպտուղ կը դառնայ» (տե՛ս Ռ ո ւ բ է ն. 1952, 96):*

[137] *Գ և ո ր գ յ ա ն. 2010, 345:*

տար էր Ղարաբաղի մէջ, ստէպ կը մերժեր ընկերներու յորդորները՝ ակն ընդ ականի օրէնքով գործել Թշնամիի դէմ, վառել այս կամ այն թաթար գիւղը, ոչնչացնել խուժանը ...»[138]: Համազասպը ևս դժգոհում էր Վարդանի մարտավարությունից. նա պահանջում էր նախահարձակ լինել ու ահաբեկել Թշնամուն[139]:

Նրանք չէին կարողանում ըմբռնել, որ «Զենքը թուրքի ձեռքին է, նոքա ավելի զինվորական են, քոչվոր, դաշտաղ, կռվող դուրս գար՝ թուրքերից կլիներ»[140]: Այս հանգամանքը հաշվի չէր առնված:

Մասնակցությունը Վիեննայի ՀՅԴ IV Ընդհանուր ժողովին և գործունեությունն արտասահմանում

1907 թ. ձմռան սկզբին Բաքվում Վարդանը տեղեկանում է, որ մասնակցելու է Վիեննայում կայանալիք ՀՅԴ IV Ընդհանուր ժողովին, ուր ժամանում է փետրվարի 25-ին:

Վիեննայի ժողովում՝ ապրիլի 20-ին հայ-թաթարական մարտերի մանրամասներին վերաբերող հաշվետվությունում[141], Վարդանն ու Սևքարեցի Սաքոն հետևյալ կերպ են բնութագրել Թշնամուն. «Զգոյշ լինենք, չհեգնենք մեր հակառակորդի ոյժը. նոքա աւելի զինուորական եւ աւելի տոկուն են քան մերոնք (հայը լալկան է եւ շուտ յուսահատուող, նոյնիսկ յաջողութեան դէպքերում): Զլինէր Դաշնակցութիւնը ասպարէզի վրայ, ղեկը իրա ձեռքը, թուրքերը հայերին կը ջարդէին»[142]:

Հաշվետվության մեջ նրանք կարևոր առաջարկություն են նաև անում՝ անհրաժեշտ են համարում կատարել հողերի փոխանակում թաթարների հետ. «Որպէսզի հայկական գաւառները ընդմիշտ սերտ միանան իրար հետ ...»[143]: Առաջարկը շատ տեղին էր, սակայն չիրականացավ:

Վիեննայում Վարդանն այցելում է թանգարաններ, պատկերասրահներ և տեսարժան այլ վայրեր, նաև՝ Մխիթարյան միաբանություն: Ժողովն ավարտվելուց հետո Վարդանը մեկնում է Շվեյցարիա: Ժնևում ծանոթանում է ռուսական Սոցիալիստ-հեղափոխական (էսէռ), լեհական, մակեդոնական և այլ կուսակցությունների ու քաղաքական գործիչների հետ: Էսէռների հետ գաղտնի փորձարկում են ինքնաշեն ռումբեր, ընկերների հետ գնում են հրաձգարանում կրակելու: Մասնակցում է Շվեյցարիայում սովորող հայ ուսանողների հավաքներին, հուշերում, մասնավորապես, հիշատակում է Վազգեն և Զարուհի Տերոյանների կրտսեր եղբորը՝ Վարազդատին[144], որին գիտեր դեռևս

---

[138] Գևորգյան. 2010, 344:

[139] Գևորգյան. 2010, 346:

[140] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 1:

[141] Շուշիում հայ-թաթարական մարտերի մանրամասնությունները տե՛ս Նիլթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 1985, 91–93: Տե՛ս նաև Մանուկյան. 2022, 284–295:

[142] Նիլթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 394:

[143] Նիլթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 396:

[144] Տերոյան Վարազդատ (1887–1938) – ազատագրական, հասարակական, քաղաքական գործիչ, փիլիսոփա, թարգմանիչ, մանկավարժ, ՀՅԴ անդամ: Ստալինյան բռնությունների զոհ:

Վանից: Ֆրիբուրգի գյուղատնտեսական ուսումնարանում Վարդանը որոշ ժամանակ ուսանում է պանրագործություն[145]:

1907 թ. մայիսի 31-ին Վարդանը կրկին Վիեննայում էր: Այստեղ ամուսնանում է իր տանտիրոջ դստեր՝ Ֆրանցեսկայի հետ: Կնոջ հայրն ազգությամբ հունգարացի էր, մայրը՝ գերմանուհի[146]:

1908 թ. Վարդանը վերադառնում է Ռուսաստան՝ Բաքու և հյուրընկալվում եղբայրների մոտ: Այդ ժամանակ մեծ թափով ընթանում են «Դաշնակցության գործով» ամբաստանված հայ գործիչների ձերբակալությունները: Ոստիկանությունը որոնում էր Վարդանին, ուստի նա ստիպված է լինում 1909 թ. գարնանը մեկնել արտասահման՝ Վիեննա: Ընտանիքի կեցությունը հոգալու նպատակով անցնում է Կ. Պոլիս, սակայն գրեթե առանց հանգստի և համապատասխան սննդի աշխատանքի հետևանքով նրա առողջությունը կտրուկ վատանում է: Ռոստոմի աջակցությամբ վերադառնում է Վիեննա, բժշկի խորհրդով մեկնում է ավստրիական առողջարաններից մեկը, որտեղ որոշ ժամանակ անց կազդուրվում է:

Ապաքինվելուց հետո Վարդանը մեկնում է Ժնև, որտեղ բնակվում է «Դրոշակ»-ի խմբագրությունում: Ներկա է լինում շվեյցարական բանակի զորախաղին. նրան զարմացնում է այն հանգամանքը, որ պահեստազորի զինծառայողների զենքը, զինամթերքն ու հանդերձանքը պահվում էր տանը, որպեսզի անհրաժեշտության դեպքում ժամանակ չկորցնեն զինվելու և հանդերձավորվելու համար:

1911 թ. սեպտեմբերին Վարդանը գալիս է Վիեննա, ապա կնոջ և որդու հետ ճանապարհվում է Կ. Պոլիս: Հոկտեմբերի վերջին կուսակցության հանձնարարությամբ մեկնում է Էրզրում (Կարին)[147], որտեղ համագործակցում է Ռոստոմի հետ, ապա 1912 թ. հունվարի վերջին[148] վերադառնում է Կ. Պոլիս: Մայիսից մինչև Առաջին աշխարհամարտը զբաղեցնում է Տրապիզոնի մոտ գտնվող Մանիսա (Մագնեսիա) քաղաքի ջուլհակագործական ֆաբրիկայի կառավարչի պաշտոնը: Այստեղ ծնվում է երկրորդ որդին: 1913 թ. հոկտեմբերի 24-ին Վարդանը Կ. Պոլսում տեղեկանում է Սիմոն Զավարյանի մահվան մասին, սակայն, ինչպես ինքն է գրում, միջազգային լարված դրությունը՝ Բալկանյան երկրորդ պատերազմը, հնարավորություն չի տալիս ներկա լինել թաղմանը:

Մասնակցությունը կամավորական շարժմանը

1914 թ. հուլիսի 19-ին՝ եվրոպական ռազմաթատերաբեմում պատերազմը սկսելուց հետո, կուսակցության պահանջով հոկտեմբերին Վարդանը վերադառնում է Կովկաս[149], քանի որ օրեցօր պարզ էր դառնում՝ Օսմանյան կայսրության հետ բախումն անխուսափելի է:

---

[145] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 37:

[146] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 36: Տեր և տիկին Մեհրաբյաներն ունեցել են երեք երեխա՝ Վարդան, Ռուբեն և Մարգարիտա:

[147] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 44:

[148] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 47:

[149] Իշխանությունները թույլ են տալիս արտասահմանից վերադառնալ ՀՅԴ այն գործիչներին, որոնք հետապնդվում էին «Դաշնակցության գործով»: Նրանց թվում էր նաև Վարդանը:

Իր հուշերում Վարդանը գրում է, որ ՀՅԴ Արևմտյան բյուրոն դեմ էր կամավորական շարժմանը, որի գրավոր կարծիքը գալով Թիֆլիս՝ նա հանձնում է Արևելյան բյուրոյին[150]: Ինքը ևս դեմ էր կամավորական շարժմանը, սակայն Թիֆլիսում տեսնելով բնակչության բազմահազարանոց ցույցերն ի պաշտպանություն Ռուսաստանի՝ փաստի առաջ է կանգնում և տալիս է իր համաձայնությունը[151]:

Հայ կամավորական շարժումը ղեկավարող կարգադրիչ մարմինը Վարդանին հանձնարարում է կազմավորել V կամավորական խումբը: Սարիղամիշյան ճակատամարտի օրերին Վարդանի խմբին ուղարկում են Ալեքսանդրապոլ, որտեղ կամավորները ջերմ ընդունելության են արժանանում քաղաքացիների կողմից: Սարիղամիշում թուրքերի պարտությունից հետո՝ 1915 թ. հունվարի 18-ին, խումբը վերադառնում է Երևան[152], տեղակայվում Նորքում: Վարդանի մոտ ծառայության է անցնում նաև Գարեգին Նժդեհը[153]: Վարդանին զարմացրել էր այն հանգամանքը, որ հայրենիքի ազատագրության համար զինվորագրել էին նույնիսկ հայ մեծահարուստների որդիները: Նա հատուկ ջերմությամբ է վերհիշում կամավորական, ուսանող Ռուբեն Շաթիրյանին, որը ցանկացած պայմաններում պահպանում էր ոգու արիությունը:

Շուտով ռուսական հրամանատարությունը որոշում է միավորել II, III և IV կամավորական խմբերը V-ի մեջ, որը ստանում է Արարատյան գունդ անվանումը: 1915 թ. ապրիլի 1-ին պաշտոնապես գունդը գլխավորում է Վարդանը:

Ապրիլի 15-ին Արարատյան գունդը սկսում է իր ռազմերթը[154] և միանում գեներալ Ալեքսեյ Նիկոլաևի Անդրկասպյան (Բայազետի ջոկատ) կազակային բրիգադին, որի կազմում էլ գործելու էր: Մի շարք հաջող մարտերից հետո Բայազետի ջոկատը դուրս է գալիս Վան տանող ճանապարհ, սակայն գեներալը հրաժարվում է առաջանալ՝ պատճառաբանելով, որ նման հրաման չունի: Հայ կամավորները և նրանց հրամանատարները տեղյակ էին, որ Վան-Վասպուրականն օրհասական պայքար է մղում թուրք-քրդական գերազանց ուժերի դեմ, ուստի ցանկանում էին օր առաջ հասնել Վան: Հակառակ գեներալ Ա. Նիկոլաևի ցանկության՝ կամավորական խմբերի հրամանատարները որո-

---

[150] *Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, անդրադառնալով ՀՅԴ մի շարք գործիչների կամավորական շարժմանը դեմ լինելուն, ապա միանալուն, փաստում է. «Այդ տակտիկան ճիշտ էր: Բայց ամեն ինչ ունի իր դիալեկտիկան, տրամաբանությունը: Եթե որոշումները հնանում են՝ այն պետք է փոխել» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1086, ց. 4, գ. 435, թ. 7):*

[151] *Գեներալ Թովմաս Նազարբեկյանը վկայում է, որ լինելով 1877–1878 թթ. ռուս-թուրքական և 1904–1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմների մասնակից՝ նման համերաշխության ականատես չէր եղել. «Ամենուրեք տեղի էին ունենում բնակչության տարբեր շերտերի ցույցեր» (տե՛ս* Սահակյան. *2019, 271–272):*

[152] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 79:*

[153] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 72:*

[154] *Վարդանը հուշագրում է. «Ամբողջ Երևանը ոտքի վրա է: Բոլոր խանութները փակ են, ժողովուրդը կամավորական բանակը ճանապարհ է ձգում դեպի Երկիր, որտեղ իրենց եղբայրները և քույրերը, իրենց նմանները տանջվում, կոտորվում են, գնան օգնության, իրենց մարդկային սրբազան պարտքը կատարելու» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 89):*

շում են առանց ռուսների շարժվել Վան: Բարեբախտաբար, թշնամին, տեղեկանալով Բայազետի ջոկատի ու Արարատյան զորախմբի մոտենալու մասին, դադարեցնում է Վանի պաշարումը և հեռանում: Վարդանն առանձնացնում է առաջապահ ջոկատ Խեչոյի հրամանատարությամբ, որը մայիսի 6-ին՝ առավոտյան ժամը 6-ին, մտնում է Վան: Կարճ ժամանակ անց քաղաք են հասնում մյուս խմբերը, ապա՝ Բայազետի ջոկատը:

Մայիսի 7-ին Վանի և ազատագրված գավառների ժամանակավոր կառավարիչ (նահանգապետ) է նշանակվում հայ ազատագրական շարժման ակտիվ գործիչ Արամ Մանուկյանը[155]*: Վարդանի վկայությամբ, գեներալ Ա. Նիկոլաևը «հայտարարեց, որ հարկավոր է մի մարդ Վանի նահանգապետ նշանակել, ես առաջարկեցի Արամին, որը և ընդունվեց»*[156]*: Թվում էր՝ ռուսական իշխանություններն իրականացնում են իրենց խոստումը ինքնավար Արևմտյան Հայաստանի մասին, սակայն հուլիսյան հայտնի նահանջն ամեն ինչ ի դերև է հանում:*

Վանի նահանջից հետո Վարդանը հասնում է Երևան, հավաքագրում է կամավորական նոր խումբ, որին հրամանատարությունը ուղարկում է Ջուլֆա: Այստեղ էլ տեղեկանում են կամավորական խմբերի լուծարման և հրաձգային գումարտակներ կազմավորելու հրամանի մասին: Խումբը Ջուլֆայից տեղափոխվում է Մարանդ. կամավորներին առաջարկում են շարունակել ծառայությունը հրաձգային գումարտակներում, իսկ հրամանատարական կազմին խոստանում են աշխարհազորային զորքերի սպայական կոչում: Վարդանը մերժում է առաջարկությունը և գեներալ Ցյոդոր Զեռնոզուբովին հրաժարականը ներկայացնելով՝ զորացրվում է[157]*: Որոշ ժամանակ բնակվում է Երևանում, ապա 1917 թ. ընտանիքի հետ տեղափոխվում է Բաքու՝ եղբայրների մոտ:*

Բաքվի պաշտպանության մասնակիցը

Բոլշևիկների իշխանության անցնելուց հետո՝ 1917 թ. նոյեմբերի 2-ին, Բաքվի բանվորների և զինվորների պատգամավորների խորհուրդը հայտարարել էր խորհրդային կառավարության կողմնակից: Ընտրվել էր գործադիր կոմիտե նշանավոր բոլշևիկ Ստեփան Շահումյանի ղեկավարությամբ: Ստեղծվել էր տագնապալից իրավիճակ. մուսավաթականները կատաղի պայքար էին սկսել նորընտիր իշխանության դեմ, իսկ նրանց աջակցում և հրահրում էին թուրքերը:

Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի հանձնարարությամբ Բաքվում հայկական զինուժի կազմավորումը ստանձնում է գնդապետ Ս. Եղիազարյանը: Կազմավորվում են 2-րդ պահեստային գունդը և Համազասպի հրամանատարության տակ գործող կամավորական գումարտակը[158]*: Բաքվի հայոց ազգային*

---

[155] *Ավելի մանրամասն տե՛ս* Ա ս ր յ ա ն. *2009:*
[156] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 2:*
[157] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 12, թ. 3:*
[158] *Հայոց պատմություն. 2010, հ. 4, 165:*

խորհրդի անդամներից էր Վարդանը[159]: «Հայ զորամասերն ունեին իրենց շտաբը, որը ղեկավարում էին Վարդանը և գնդապետներ Հարությունյանն ու Ղազարյանը»[160]:

1918 թ. սեպտեմբերի 15-ին՝ օսմանյան զորքերի կողմից Բաքուն գրավելուց առաջ[161], Վարդանը ընտանիքի հետ ապաստանում է Աստրախանում, որտեղի Զեկան (Արտակարգ հանձնաժողովը). նրան հանձնարարում է պարզել տարհանված Բաքվի 26 կոմիսարների գտնվելու վայրը[162]: Վարդանը «Պոսեյդոն» շոգենավով մեկնում է Պետրովսկ (Մախաչկալա). այստեղ տեղեկանում է կոմիսարների մահապատժի մասին և անցնում է Էնզելի, որտեղից էլ վերադառնում է Բաքու, ապա՝ Երևան[163]:

Կնոջ անժամանակ մահից հետո Վարդանը ամբողջությամբ կլանվում է ընտանիքի հոգսերով և զբաղվում է հողագործությամբ: Խանասորի Վարդանը մահացել է 1943 թ. հունվարի 2-ին Մոսկվայում[164]:

Եզրակացություն

Հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Սարգիս Մեհրաբյանը (Վարդան, Խանասորի Վարդան) բուռն կյանք ու գործունեություն է ունեցել: 1890 թ. Ս. Մեհրաբյանը ակտիվ մասնակցություն է ունենում հայդուկային շարժմանը. 1897 թ. գլխավորում է Խանասորի նշանավոր արշավանքը, 1905–1906 թթ. հայ-թուրքական կռիվների ժամանակ՝ Արցախի ինքնապաշտպանությունը: Առաջին աշխարհամարտի տարիներին նշանակվում է հայ կամավորական V դրուժինայի, ապա՝ Արարատյան V գնդի հրամանատար: 1918 թ. մասնակցում է Բաքվի պաշտպանության մարտերին:

Ռուբեն Սահակյան – պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատ, կամավորական շարժում, Հայոց ցեղասպանություն, ինքնապաշտպանական մարտեր, հայկական ոստիկանության պատմություն: Հեղինակ է 10 գրքի, փաստաթղթերի նյութերի ժողովածուների և շուրջ 100 հոդվածի: rubensahakyan58@gmail.com

---

[159] *Ա.-Դ ո. 2019, 554:*

[160] *Ա.-Դ ո. 2019, 555–556:*

[161] *Բաքվի պաշտպանության մասին ավելի մանրամասն տե՛ս Հայոց պատմություն. 2010, հ. 4, 165–178, Ս տ ե փ ա ն յ ա ն. 2011, 360–436:*

[162] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 12, թ. 5:*

[163] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 12, թ. 5:*

[164] *Խանասորա Վարդանի Հիշատակարանը, 1992, 9:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա-Դո. 1907, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905–1906 թ.) (փաստական, վիճակագրական, լուսաբանութիւններով), Երևան, տպարան Այվազեանց ու Նազարեանց, 464 էջ:

Ա-Դո. 2013, Ռուսական ցարերը և հայկական հարցը, առաջ. և ծանոթ. պ. գ. թ. Ռ. Գասպարյանի և պ. գ. թ. Ռ. Սահակյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 161 էջ:

Ա-Դո. 2019, Հայության երկունքը, հրատ. պատր.՝ Վ. Ղազախեցյան, Ռ. Գասպարյան, Ռ. Սահակյան, Հ. Սուքիասյան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 765 էջ:

«Ալիք» (Թիֆլիս), 19. VI. 1906, 25. VI. 1906, 29. VI. 1906:

«Ալիք» (Թեհրան), 05. X. 2017:

Ասրյան Ա. 2009, Արամ Մանուկյան: Կյանքը և գործունեությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 114 էջ:

«Արև» (Բաքու), 15. VI. 1916:

Գասպարյան Ռ., Սահակյան Ռ. 2015, Մար-ի նորահայտ հուշերը. – «Վէմ» (Երևան), № 3, էջ 197–233:

Գևորգյան Հ. 2010, Ազատագրական պայքարի կովկասյան ճակատը, Երևան, «Լուսակն», 526 էջ:

Խանասորա Վարդանի Հիշատակարանը. 1992 (մշակումը և առաջաբանը Ս. Վրացյանի), կազմ. և խմբ.՝ Ա. Ռ. Մարտիրոսյան, Երևան, «Հայաստան», 189 էջ:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 402, g. 2, գ. 1, 7, 8, 10, 12, ֆ. 1086, g. 4, գ. 435:

Հայոց պատմություն. 2010, հ. 3, գիրք I: Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես և XIX դարի վերջ): Խմբագրակազմ՝ Ա. Մելքոնյան և ուրիշ., Երևան, «Զանգակ», 704 էջ + 24 էջ ներդիր:

Հայոց պատմություն. 2010, հ. 4, գիրք I: Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.): Խմբագրակազմ՝ Վ. Ղազախեցյան և ուրիշ., Երևան, «Զանգակ – 97», 800 էջ + 24 էջ ներդիր:

Հայոց պատմություն. 2015, հ. 3, գիրք II: Նոր ժամանակաշրջան (1901–1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին): Խմբագրակազմ՝ Ա. Մելքոնյան և ուրիշ., Երևան, «Զանգակ», 760 էջ + 32 էջ ներդիր:

Հովսեփյան Հ. 2009, Ղարադաղի հայերը. ազգագրական և բանահյուսական ժառանգություն, հ. I, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 502 էջ:

«Հորիզոն» (Թիֆլիս), 04. X. 1915:

Մանուկյան Ա. 2022, Նիկոլ Աղբալյանը Շուշիի 1906 թ. հայ-թուրքական կռիվների ականատես. – ՊԲՀ, № 2, էջ 284–295:

Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան. 1950, 1890–1950, Բոստոն, «Հայրենիք»-ի տպարան, 636 էջ:

Նիկոլ Դուման. 2021, Նամականի, հրատարակութեան պատրաստութիւն եւ ծանօթագրութիւններ՝ Երուանդ Փամպուքեանի, Երևան, «Լուսակն», 336 էջ:

Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 1982, Դ. հատոր, հրատարակութեան պատրաստեց եւ խմբագրեց Հրաչ Տասնապետեան, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սեթեան տպարան, 383 էջ:

Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 1985, Բ. հատոր, Բ. տպագրութիւն (յաւելուածով), հրատարակութեան պատրաստեց եւ խմբագրեց Հրաչ Տասնապետեանը, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սեթեան տպարան, 395 էջ:

Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, Գ. հատոր, Բ. տպագրութիւն, հրատարակութեան պատրաստեց եւ խմբագրեց Հրաչ Տասնապետեանը, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սեթեան տպարան, 357 էջ:

Ձհանգիրյան Ս. Մ. 2021, Սևասար-Ղարադաղ. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, «Անտարես», 400 էջ:

Ռուբէն. 1952, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ա. հատոր, Լոս Անճէլըս, Գալիֆ., «Հորիզոն» տպարան, 152 էջ:

Սահակեան Ռ. 1998, Վազգէն (Տիգրան Տէրոյեան). Նահատակութեան 100 ամեակի առթիւ. – «Դրօշակ» (Երևան), 26. III – 8. IV, էջ 22–27:

Սահակյան Ռ. 2019, Թովմաս Նազարբեկյանի անտիպ հուշերը.– «Վէմ» (Երևան), № 1, էջ 264–296:

Ստեփանյան Գ. 2011, Բաքու քաղաքի հայության պատմությունը: Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 651 էջ:

Վասպուրականի վերջին հերոսական կռիւերում ընկած քաջերը. – «Դրօշակ» (Ժնև), 1897, № 11, էջ 83:

Վրացեան Ս. 1936, Դէպքերը Վասպուրական աշխարհում (1894–1896), Վարդանի յիշատակարանը. – «Հայրենիք» (Պոսթըն), 1936, № 12, էջ 58–76, 1936, № 1, էջ 85–115, № 2, էջ 124–140, № 3, էջ 100–119:

Ֆիշէր Հ. 1897, № 12, Ֆէդայիների արիւնահեղ ճակատամարտը Խանասորի լեռնադաշտում. – «Դրօշակ» (Ժնև), էջ 96–99:

Ֆիշէր Հ. 1897, № 13, Հայոց մի յաղթութիւնը (մի եւրոպացու պատմած). – «Դրօշակ» (Ժնև), էջ 106–108:

Ֆիշէր Հ. 1897, № 14, Ֆէդայիների արիւնահեղ ճակատամարտը Խանասորի լեռնադաշտում. – «Դրօշակ» (Ժնև), էջ 112–119:

Ֆիշէր Հ. 1897, № 16, Խանասորի կռիվը. նահանջ (ձիաւորի յիշատակարանից). – «Դրօշակ» (Ժնև), էջ 134–136:

Ֆրանգեան Ե. 1904, Պարսկաստանի քիւրդերը. – «Մուրճ» (Թիֆլիս), № 6, էջ 76–84:

Сибирский. 1916, Васпуракан (Странички из прошлого Ванского вилайета). – «Армянский вестник» (Москва), № 16, с. 2–6; № 17, с. 3–6; № 18, с. 2–5; № 19, с. 8–11; № 20, с. 4–7; № 21, с. 4–8.

САРГИС МЕГРАБЯН (ХАНАСОРИ ВАРДАН)

РУБЕН СААКЯН

Р е з ю м е

Ключевые слова: С. Меграбян, Шуши, Ван, Севкареци Сако, Ханасор, С. Заварян, Киликия, Ростом, армяно-татарские столкновения, Первая мировая война, добровольческое движение, Геноцид, А. Манукян, Ереван, Баку.

Начиная с 1890 г. молодой арцахец Саргис Меграбян, который был также известен под именем Ханасори (Ханасорский) Вардан или просто Вардан, посвящает себя армянскому освободительному движению. Получив первое боевое крещение в походе Саргиса Кукуняна, он связывает свое будущее с движением армянских гайдуков.

В 1894–1896 гг. участвует в самообороне Вана-Васпуракана, ведет работы по организации групп сопротивления в армянских населенных пунктах. Апогеем гайдукской деятельности Вардана можно считать Ханасорскую экспедицию 1897 г. против курдского племени мазриков. Вернувшись на Кавказ – в Баку, он начинает писать свои воспоминания, которые охватывают события 1894–1896 гг. Они были опубликованы в газете «Дрошак». Как представитель Шатаха участвует во II Всеобщем съезде АРФД, состоявшемся в Тифлисе в апреле-июне 1898 г.

В 1904–1905 гг. по поручению партии, вместе с Симоном Заваряном отправляется в Киликию, чтобы на месте изучить ситуацию и оценить возможности распространения там освободительного движения.

С июля 1905 г. по декабрь 1906 г., во время армяно-татарских столкновений, Вардан возглавляет самооборону Арцаха и близлежащих армянских провинций.

В 1907 г. в Вене Вардан принимает участие в IV Всеобщем съезде АРФД, где вместе с Севкареци Сако представляет отчет об армяно-татарских столкновениях. В том же году он женится. 1911–1914 годы Вардан проводит за границей, но после начала Первой мировой войны, по требованию партии, возвращается на Кавказ, где начиналось ополченское-добровольческое движение. Вардан был против этого движения, однако всеобщее воодушевление заставляет его примкнуть к нему. Ему поручается организация Пятой ополченской бригады.

1 апреля 1915 г. по решению русского командования официально создается Пятый Араратский полк, в состав которого входят вторая, третья и четвертая добровольческие бригады. Командиром полка назначается Вардан. Полк в составе русской Закаспийской казачьей бригады принимает участие в ряде боевых операций, важнейшая из которых была связана с освобождением Вана. В результате внезапного отступления русской армии из Вана в июле 1915 г. добровольческие отряды были расформированы. В Ереване Вардан приступает к созданию новой бригады, затем отправляется в Иран, сначала в Джульфу, потом в Маранд. Здесь, узнав о расформировании добровольческих дружин, Вардан уходит в отставку и вместе с семьей переселяется в Баку.

В 1918 г. как член Бакинского армянского национального совета участвует в защите армянского населения города. При падении города успевает перевезти семью в Астрахань. Местная ВЧК (Всероссийская чрезвычайная комиссия) поручает ему содействовать спасению 26 Бакинских комиссаров. Прибыв в Петровск (Махачкала), Вардан узнает о казни комиссаров, затем возвращается в Ереван. Вардан уходит из жизни 2 января 1943 г. в Москве.

Рубен Саакян – д. и. н., заведующий отделом новой истории Института истории НАН РА, ведущий научный сотрудник. Научные интересы: российско-турецкий фронт Первой мировой войны, добровольческое движение, Геноцид армян, самооборонительные сражения, история армянской полиции. Автор 10 книг, сборников документальных материалов и около 100 статей. rubensahakyan58@gmail.com

SARGIS MEHRABIAN (KHANASORI VARDAN)

RUBEN SAHAKYAN

S u m m a r y

Key words: Sargis Mehrabian, Shushi, Van, Sevkaretsi Sako, Khanasor, Simon Zavarian, Cilicia, Rostom, Armenian-Tatar clashes, First World War, volunteer movement, genocide, Aram Manukian, Baku, Yerevan.

A young man from Artsakh, Sargis Mehrabian, also known as Khanasori Vardan (Vardan of Khanasor) or simply Vardan, devoted himself to the Armenian Liberation Movement as early as 1890. Having received the baptism of fire in the campaign headed by Sargis Kukunian, he joined the Armenian Haiduk Movement.

From 1894 to 1896, he took part in the self-defense of Van-Vaspurakan and carried out work on organizing resistance groups in Armenian settlements. The Khanasor expedition of 1897 can be considered the apogee of Vardan's Haiduk activity against the Kurdish Mazrykan tribe. Having returned to the Caucasus – Baku, he started writing his memoirs, which cover the events through 1894 to 1896. They were published in the newspaper 'Droshak'. As a representative of Shatakh, he participated in the Second General Congress of the ARF (Dashnaktsutyun), held in Tiflis from April to June of 1898.

Through 1904 to 1905, together with Simon Zavarian, on behalf of the Dashnaktsutyun party, he went to Cilicia, in order to study the situation on the spot and assess the possibilities of spreading the liberation movement there.

From July 1905 to December 1906, during the Armenian-Tatar clashes, Vardan led the self-defense of Artsakh and the nearby Armenian provinces.

In 1907, in Vienna he took part in the Fourth General Congress of the ARFD, where Vardan, together with Sevkaretsi Sako, presented a report on the Armenian-Tatar clashes. He married in the same year. From 1911 to 1914, he spent working abroad, but after the outbreak of the First World War, at the request of the party, he returned to the Caucasus, where the militia-volunteer movement began. Vardan did not approve of this movement, but its wide popularity made him join it. He was entrusted with the organization of the Fifth Militia Brigade.

On April 1, 1915, by decision of the Russian command, the Fifth Ararat Regiment was officially founded, which included the second, third and fourth volunteer brigades. Vardan was appointed commander of the regiment. As part of the Russian Transcaspian Cossack Brigade, the regiment participated in a number of military operations, the most important of which was that of the liberation of Van. As a result of the sudden retreat of the Russian army from Van in July 1915, the volunteer detachments were disbanded. In Yerevan, Vardan started creating a new brigade. Next, he went to Iran, first to Julfa, then – Marand. Here, having learned about the disbandment of volunteer squads, Vardan resigned and moved to Baku with his family.

In 1918, as a member of the Baku Armenian National Council, he participated in the defense of the Armenian population of the city. When the city fell, he managed to transport his family to Astrakhan. The local VChK (All-Russian Extraordinary Commission) instructed him to assist with the rescue of 26 Baku commissars. Arriving in Petrovsk (Makhachkala) Vardan learned about the execution of the commissars, and he decided to return to Yerevan. Vardan passed away in Moscow on January 2, 1943.

Ruben Sahakyan – Doctor of Sciences in History, Head of the Department of Modern History of the NAS RA Institute of History, Leading Researcher. Scientific interests: Russian-Turkish Front of the First World War, volunteer movement, Armenian Genocide, self-defense battles, history of the Armenian police. Author of 10 monographs, collections of documents, around 100 articles. rubensahakyan58@gmail.com